

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Վեհափառ Հայրապետի առաջադրութեամբ, Տաթևի, Հաղարծնի եւ Հառիճա վանքերը Հայաստանի Յուշարձանների Պահպանութեան կոմիտէի կողմից յանձնուեցին Մայր Աթոռիս խնամքին եւ գործածութեան իրրեւ կրօնական սրբատեղիներ :

Տաթևի (Թ. դար), Հաղարծնի (ԺԱ. - ԺԲ. դարեր) եւ Հառիճա (Է. - ԺԳ. դարեր) վանքերը մեր նշանաւոր պատմական յուշարձանների շարքին են պատկանում իրենց ճարտարապետական ոճով եւ հոգեւոր - մշակութային անցեալով :

Մայր Աթոռը մօտ ապագայում պիտի կազմէ յատուկ ծրագիր այս պատմական վանքերի վերանորոգման եւ կեանքի կոչելու կապակցութեամբ :

20 Մայիս 1959 թ.
Ս. Էջմիածին

(ԿՆԻԲ ԳԻՒԱՆԱՏԱՆ)

ԳԻՒԱՆ ՄՍՅՐ ԱԹՈՌԻ

Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի Աւագ Սեղանի վերակառուցման առթիւ , Վեհափառ Հայրապետի սիրալիր համաձայնութեամբ, Երեւանի Գիտութիւնների Ակադեմիան պեղումներ կատարեց Ս. Սեղանի բեմի տակ, ղեկավարութեամբ ճարտարապետ Ա. Սահինեանի :

Սոյն թուի ապրիլի ճին, Երեւանից հրաւիրուած հնագէտների եւ ճարտարապետների յանձնաժողովը տեղում քննելով պեղումների արդիւնքները, հաստատեց հետեւեալը .

Ա. — Այժմեան Ս. Սեղանի տակ, մօտ 1,5 մետր խորութեան, յայտնաբերուեցին Ե. դարում, Վահան Մամիկոնեանի կողմից կառուցուած Աւագ Սեղանի խարխալները, բեմը եւ Վէժ քարը պահպանուած անաղարտ վիճակում :

Բ. — Ե. դարի բեմի որոշ սրբատաշ քարերի վրայ պահպանուած են հնագոյն որմանկարների մնացորդներ :

Գ. — Ե. դարի Ս. Սեղանի կառուցուածքի ներսում պահպանուած են առաւել հնագոյն խորանի պատեր, որոնք ըստ իրենց կառուցուածքի եւ շինարարական տեխնիկայի, գոյութիւն են ունեցել մինչեւ Ե. դարը : Այն կարող է լինել Ս. Գրիգոր Լուսաւորչի օրով (301 թ.) կառուցուած խորանը կամ թերեւս պատկանել է առաւել հնագոյն շրջանի սրբավայրի :

Դ. — Ե. դարի բեմի ներքեւի շարուածքի մէջ, հորիզոնական ուղղութեամբ, յայտնաբերուած է Ուրարտական ժամանակաշրջանի (Չ. - Թ. դար Բ. առաջ) մի սրբատաշ որձաքարից (բազալտ) յղկուած մի մեծ կոթող, որը իր չափերով (3,10x73x0,53 մ.) հանդիսանում է ցարդ յայտնի Ուրարտական կոթողներից ամենամեծը :

Այդ հազուագիւտ յուշարձանը վկայում է Մայր Տաճարի ստեղծումից աւելի քան մէկ հազարամեակ առաջ, Ս. Էջմիածնի շրջապատում, դեռեւս Ուրարտական ժամանակաշրջանից գոյութիւն ունեցող մշակութային կեանքի կեդրոնի առկայութիւնը :

Վեհափառ Հայրապետը հաստատեց հնագէտ - ճարտարապետների առաջարկութիւնները, այն է .

Ա) Մայր Տաճարի նոր կառուցուելիք Աւագ Սեղանի մակերեսը պատել երկաթ - բեթոնով, պահպանելով բեմի տակ պեղումների հետեւանքով ներկայիս առաջացած գետնափոր տարածութիւնը իր անցքերով եւ Ս. Սեղանի յետեւի կողմից (թանգարանից) յատուկ մուտք բանալ ընդհանուր դիտման համար, որպէս սրբավայր եւ պատմական յուշարձան :

Բ) Ուրարտական որձաքար կոթողը (ստեւան) դուրս հանել իր տեղից եւ կանգնեցնել Ս. Էջմիածնի քակում մի յարմար տեղ, յատուկ պատուանդանի վրայ, իրրեւ յուշարձան - կոթող :

10 Ապրիլ 1959 թ.
Ս. Էջմիածին

(ԿՆԻԲ ԳԻՒԱՆԱՏԱՆ)

ԳԻՒԱՆ ՄՍՅՐ ԱԹՈՌԻ